

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Դիվիսա Էյ Էմ» ՓԲԸ
Տնօրենի կողմից
Հրաման թիվ Վ11-17
“29” մարտի 2017 թ.

ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ


1.1. Սույն Կանոնները սահմանում են «Դիվիսա Էյ Էմ» Փակ Բաժնետիրական Ընկերության (այսուհետ՝ Բրոքեր) կողմից հաճախորդներին բրոքերային ծառայություններ մատուցելու ընդհանուր կարգը:

1.2. Սույն Կանոնները մշակվել են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, ՀՀ “Արժեթղթերի շուկայի մասին” օրենքի և դրա Կանոնակարգերի, այլ իրավական ակտերի և Բրոքերի ներքին իրավական փաստաթղթերին համապատասխան:

1.3. Սույն Կանոններին համապատասխան Բրոքերը Հաճախորդներին ծառայություններ է մատուցում հաճախորդներից արտարժույթով և ապրանքներով (commodities) գործարքների կատարման հանձնարարականներ ընդունելու և հաղորդելու միջոցով:

1.4. Բրոքերը իր հաճախորդներին չի տրամադրում խորհրդատվություն արտարժույթում և ապրանքներում (commodities) ներդրում անելու վերաբերյալ և որևէ կերպ չի երաշխավորում կամ չի խրախուսում այս կամ այն ներդրման կատարումը: Ցանկացած տեղեկատվություն, որը Բրոքերը կտրամադրի հաճախորդին ներդրման կամ արտարժույթի կամ ապրանքների (commodities) վերաբերյալ բացառապես նպատակ է հետապնդելու ներկայացնել արտարժույթի կամ ապրանքների (commodities) կամ ներդրման էությունը և հաճախորդի կողմից չպետք է ընդունվի որպես խորհուրդ:

2. Տեղեկություններ բրոքերի մասին

	<p align="center">Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ</p>	<p align="center">ՎՀ 11-17 Հ1</p>
---	---	-----------------------------------

Լրիվ անվանումը՝ «Դիվիսա Էյ Էմ» փակ բաժնետիրական ընկերություն, կրճատ անվանումը՝ «Դիվիսա Էյ Էմ» ՓԲԸ;

- 2.1. Պետական գրանցումը՝ 10.07.2012թ., պետական գրանցման համարը՝ 11;
- 2.2. Լիցենզիա՝ ներդրումային ծառայությունների մատուցման;
- 2.3. Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, 0019, Մարշալ Բաղդասյան 5, շին. 11;
- 2.4. Ինտերնետային կայքը՝ www.divisa.am, էլեկտրոնային հասցեն՝ info@divisa.am;
- 2.5. Բրոքերը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից, որը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 6 հասցեում, հեռախոս՝ 583841, ինտերնետային կայք՝ www.cba.am, էլեկտրոնային հասցե՝ mcba@cba.am:

3. Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը և բրոքերային հաշվի բացումը

3.1. Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու համար հաճախորդը առցանց կամ Բրոքերի գրասենյակում լրացնում է դիմում:

3.2. Դիմում լրացնելիս Բրոքերը պահանջում է Հաճախորդից հետևյալ տեղեկատվությունը.


- ա) ֆինանսական շուկայում հաճախորդի փորձի մասին տեղեկատվություն,
- բ) հաճախորդի ակտիվների չափի մասին տեղեկատվություն,
- գ) հաճախորդի կողմից ակնկալվող ներդրումների մեծության մասին տեղեկատվություն:

3.3. Նախքան բրոքերային ծառայությունների պայմանագրի կնքումը և բրոքերային ծառայությունների մատուցումը Բրոքերը բոլոր օրենսդրորեն և իր ներքին ակտերով սահմանված կարգով տրամադրում է Հաճախորդներին տեղեկատվություն և ստանում նրա համաձայնությունը հետևյալ հարցերով՝

3.3.1. իր և իր կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ,

3.3.2. Շահերի բախման սահմանափակման քաղաքականության համառոտ նկարագիրը (Հավելված 1)

3.3.3. արտարժույթի և ֆինանսական շուկայի այլ գործիքների վերաբերյալ (Հավելված 2),

	<p align="center">Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ</p>	<p align="center">ՎՀ 11-17 Հ1</p>
---	---	-----------------------------------

3.3.4. արտարժույթի գործարքներ կատարելիս ծագող ռիսկերի վերաբերյալ (Հավելված 2),

3.3.5. արտարժույթի գործարքների կնքման վայրի կամ հարթակների (կամ այլ միջոցների) վերաբերյալ,

3.3.6. համապատասխան ծախսերի և միջնորդավճարների վերաբերյալ;

3.3.7. Անձնական տվյալների մշակման համաձայնության վերաբերյալ (Հավելված 3)

3.4. Նախքան բրոքերային ծառայությունների պայմանագրի կնքումը և բրոքերային ծառայությունների մատուցումը Բրոքերը Հաճախորդի ընտրությանն է ներկայացնում նաև իր ներքին ակտերով սահմանված գործող բրոքերային ծառայությունների փաթեթները:

3.5. Դիմումը լրացնելիս Հաճախորդը ստորագրում է նաև Բրոքերային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանները:

3.6. Դիմում լրացնելուց հետո Բրոքերը, իրականացնելով հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն՝ որոշում է ընդունում հաճախորդի համար բրոքերային հաշիվ բացելու մասին կամ բրոքերային հաշվի բացումը մերժելու և պայմանագիր չկնքելու վերաբերյալ:

3.7. Բրոքերային հաշիվ բացելու դեպքում այդ մասին տեղյակ է պահվում հաճախորդին:

4. Հաճախորդների դասակարգումը

4.1. Հաճախորդի համար բրոքերային հաշիվ բացելիս Բրոքերն իրականացնում է հաճախորդների դասակարգում ըստ հետևյալ դասերի.

ա) պրոֆեսիոնալ հաճախորդ;

բ) ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ:

4.2. Հաշիվ բացելիս Հաճախորդը դասակարգվում է որպես ոչ պրոֆեսիոնալ, բացառությամբ հետևյալ դեպքերի.

ա) հաճախորդը հանդիսանում է ներդրումային ընկերություն, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ, բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային, կենսաթոշակային ֆոնդ և ներդրումային ֆոնդի կառավարիչ, ինչպես նաև օտարերկրյա պետությունում գրանցված այնպիսի իրավաբանական անձ, որը

տվյալ պետության օրենսդրության համաձայն, իրավունք ունի իրականացնելու սույն ենթակետով սահմանված որևէ անձի գործունեություն,

բ) հաճախորդը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետության համայնքները, Կենտրոնական բանկը, օտարերկրյա պետությունները, օտարերկրյա պետությունների տեղական ինքնակառավարման մարմինները, օտարերկրյա պետությունների կենտրոնական բանկերը,

գ) հաճախորդը հանդիսանում է միջազգային ֆինանսական կազմակերպություն, այդ թվում՝ Արժույթի միջազգային հիմնադրամը, Եվրոպական կենտրոնական բանկը, Եվրոպական ներդրումային բանկը.

դ) անձը ՀՀ Կենտրոնական բանկի կանոնակարգ 4/06-ին համապատասխան գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկում.


ե) հաճախորդ իրավաբանական անձի բոլոր մասնակիցները (բաժնետերերը, փայատերերը) հանդիսանում են սույն կետի «ա-դ» ենթակետերում նշված անձինք:

Սույն Կարգի 4.2-րդ կետում նախատեսված կարգով հաճախորդը կարող է դասակարգվել որպես պրոֆեսիոնալ հաճախորդ բացառապես իր համաձայնությունը տալու դեպքում:

Մինչև Հաճախորդին որպես պրոֆեսիոնալ դասակարգելը Բրոքերը Հաճախորդին զգուշացնում է, որ պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգվելու դեպքում հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ չեն գործելու իր հանդեպ, ինչպես նաև ներկայացնում է այդ պահանջների էությունը: Բրոքերը դադարեցնում է Հաճախորդի պրոֆեսիոնալ կարգավիճակը, եթե տեղեկանում է, որ վերջինս դադարել է օրենսդրորեն սահմանված որակավորված ներդրող լինելուց:

5. Բրոքերային հաշիվ

5.1. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելուց և բրոքերային հաշիվ բացելու մասին որոշում ընդունելուց հետո Բրոքերը Հաճախորդի համար բացում է բրոքերային հաշիվ՝ տալով նրան թվային իդենտիֆիկացիոն համար Բրոքերի ղեկավար մարմնի կողմից հաստատված Կոդավորման կարգին համապատասխան:

	<p align="center">Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ</p>	<p align="center">ՎՀ 11-17 Հ1</p>
---	---	-----------------------------------

5.2. Բրոքերը Հաճախորդի համար բացված բրոքերային հաշվում օրենսդրական պահանջներին համապատասխան վարում է գրանցումներ Հաճախորդի մասին, ինչպես նաև իր կողմից վերջինիս մատուցած բրոքերային ծառայությունների և գործարքների մասին:

6. Պատվերների ընդունում և կատարում

6.1. Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում Բրոքերը Առևտրային Հարթակի միջոցով Հաճախորդներից ընդունում է ֆինանսական շուկայի գործիքներով գործարքների կատարման պատվերներ:

6.2. Բրոքերը Հաճախորդից ընդունում է պատվերներ և փոխանցում կատարման դրանք համաձայն MT4 հարթակի ֆունկցիոնալին համապատասխան:

6.3. Բրոքերը Հաճախորդների պատվերը կատարում է անկողմնակալ, անհապաղ և ճշգրիտ:

6.4. Բրոքերը Հաճախորդների այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարում է ըստ դրանց ստացման հերթականության:


7. Գրանցումների վարում

7.1. Բրոքերը բրոքերային ծառայություններ մատուցելու շրջանակներում վարում է գրանցումներ իր Հաճախորդների, վերջիններիս հետ կնքված Պայմանագրերի, նրանցից ստացված պատվերների, պատվերներով կատարված գործարքների վերաբերյալ:

8. Հաշվետվություններ


8.1. Բրոքերը Հաճախորդից ընդունած պատվերներով կատարած գործարքների վերաբերյալ Հաճախորդին անհապաղ, սակայն ոչ ուշ, քան գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը կապի հուսալի միջոցներով տրամադրում է հաշվետվություններ:

9. Այլ դրույթներ

	Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ	ՎՀ 11-17 Հ1
---	---	--------------------

9.1. Սույն Կանոնները ուժի մեջ են մտնում Բրոքերի ղեկավար մարմնի կողմից հաստատելու պահից:

9.2. Սույն Կանոններում փոփոխությունները և լրացումները Բրոքերը կատարում է միակողմանիորեն, որոնք ևս ուժի մեջ են մտնում Բրոքերի ղեկավար մարմնի կողմից հաստատելու պահից:

	<p align="center">Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ</p>	<p align="center">ՎՀ 11-17 Հ1</p>
---	---	-----------------------------------

Հավելված 1

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Շահերի բախման ռիսկերի կառավարումը

1. Ներածություն. «Դիվիսա Էյ Էմ» ՓԲԸ-ն (DAM) պարտավոր է միջոցներ ձեռնարկել շահերի բախման այնպիսի իրավիճակները բացահայտելու և կանխարգելելու համար, որոնք կարող են ծագել իր և հաճախորդի, կամ երկու հաճախորդների միջև: Սույն փաստաթուղթը (Շահերի բախումների կանխարգելման քաղաքականություն) սահմանում է այն պոտենցիալ ռեպերը, որոնք կարող են հանդիսանալ շահերի բախումներ, և ամփոփ ներկայացնում է այն գործողությունները, որոնք մենք ձեռնարկելու ենք՝ այդպիսի շահերի բախումները կանխարգելելու համար:

2. Պոտենցիալ կամ իրական կոնֆլիկտ. Շահերի բախում կարող է առաջանալ այն դեպքերում, երբ DAM-ը, իր աշխատակիցներից մեկը կամ DAM փոխկապակցված անձանցից մեկը այնպիսի ֆինանսական ծառայություններ է մատուցում իր հաճախորդներին կամ ներգրավվում է նրա հաշվով այնպիսի գործողությունների կատարման մեջ, որոնք կարող են նյութական վնաս հասցնել հաճախորդին: Այդպիսի դեպքերից են, օրինակ, երբ DAM-ը կամ նրա աշխատակիցը.

- 2.1. Կարող է գումար վաստակել կամ խուսափել վնասից՝ ի հաշիվ հաճախորդի,
- 2.2. Հաճախորդի համար մատուցված ծառայության կամ հաճախորդի անունից իրականացված գործարքի ելքի մեջ ունի շահագրգռվածություն, որը հակասում է հաճախորդի շահին,
- 2.3. Հաճախորդի հաշվին ի օգուտ այլ հաճախորդների կամ հաճախորդների խմբի գործելու համար ունի նյութական կամ այլ շահագրգռվածություն:

DAM-ը և իր փոխկապակցված անձինք հաճախորդների համար մատուցում են մի շարք ծառայությունների, ներառյալ խորհրդատվական, վաճառքի և առևտրային գործունեության

	<p align="center">Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ</p>	<p align="center">ՎՀ 11-17 Հ1</p>
---	---	-----------------------------------

ծառայություններ: Որպես այդպիսին, DAM-ը սահմանել է հետևյալ դեպքերը, որոնք կարող են հանգեցնել շահերի բախման:

2.4. Երբ DAM-ը գործում է որպես իր սեփական հաշվի պրինցիպալ՝ ներդրումը հաճախորդին վաճառելու կամ այն հաճախորդից գնելու ժամանակ, կամ այլ կերպ այդպիսի ներդրման կամ դրան փոխկապակցված ներդրման հետ գործարք անելիս,

2.5. Հաճախորդի պատվերը փոխանցելու կամ կատարելու համար պատվերը այլ ընկերությանը փոխանցելիս վճար ստանալը,

2.6. Մի հաճախորդի գործարքը այլ հաճախորդին առաջարկելիս, երբ DAM-ը երկու հաճախորդների համար հանդես է գալիս որպես միջնորդ գործակալ՝ ստանալով համապատասխան միջնորդավճարներ:

3. Քաղաքականություններ և ընթացակարգեր. DAM հաստատել է ներքին քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնք նպատակ ունեն կառավարել շահերի բախման հետ կապված ռիսկերը՝ անընդհատ դիտարկելով այդպիսի դեպքերը:

3.1. **Տեղեկատվական արգելքներ.** Տեղեկատվական արգելքները, որոնք հաճախ կոչվում են «Չինական Պատեր», կանոնների, ընթացակարգերի և կազմակերպական միջոցառումների ամբողջություն է, որը նպատակ է հետապնդում երաշխավորելու, որ DAM կողմից կազմակերպված գործընթացների մասնակիցների կողմից ձեռք բերված որոշակի տեղեկատվությունը չի փոխանցվում DAM այլ աշխատակիցներին կամ նրա փոխկապակցված անձանց: Տեղեկատվական արգելքները նպատակ են հետապնդում կառավարել շահերի բախման հետ կապված ռիսկերը՝ երաշխավորելով, որ հաճախորդի գաղտնի տեղեկատվությունը չի օգտագործվի ի շահ ուրիշների և որ հաճախորդին խորհուրդները և այլ ծառայությունները տրամադրվում են DAM շահերից անկախ:

3.2. **Արտաքին գործունեություն.** DAM աշխատողները պարտավոր են իրենց ողջ աշխատաժամանակը և եռանդը ներդնել ընկերությունում աշխատելու մեջ և խուսափել այնպիսի գործունեությունից, որը կարող է հակասել DAM կամ իր հաճախորդների շահերին: DAM աշխատողները չեն կարող ներգրավվել այլ գործունեության մեջ, ներառյալ գործարարական գործունեության մեջ՝ առանց DAM գրավոր համաձայնության:

3.3. **Նվերներ և ժամանց.** DAM ընդունել է «բիզնես նվերների» քաղաքականությունը: DAM աշխատողները իրավունք չունեն ուղղակիորեն կամ անուղղակիորեն տալ կամ ցանկացած հաճախորդից ստանալ նվերներ, գույքի օգտագործման իրավունք կամ այլ ծառայություններ: Այս քաղաքականությունը գործում է նաև այն դեպքում, երբ աշխատողը վճարում է նվերի համար և DAM-ից փոխհատուցում չի պահանջում: DAM աշխատողները և նրանց ընտանիքի անդամները իրավունք չունեն ընդունել ողջամիտ արժեքը գերազանցող ցանկացած նվեր, ներառյալ հյուրասիրություն ցանկացած անձից, ով DAM հետ գտնվում է գործարարական կապի մեջ:

3.4. **Անկախության քաղաքականություն.** DAM կամ իր աշխատողները ներդրումային ծառայություններ մատուցելիս անտեսում է այն նյութական շահերը, որը նրանք կարող են ունենալ հաճախորդներին խորհրդատվություն տրամադրելիս կամ նրանց համար գործարքներ կնքելիս: Այդ քաղաքականությունը երաշխավորում է, որ հաճախորդներին ծառայություններ մատուցելիս DAM աշխատողները գործում են անկախ այլ հաճախորդների կամ DAM հանդեպ ստանձնած պարտավորություններից: Սա նշանակում է, որ բոլոր աշխատողները պետք է անտեսեն հետևյալ շահերը և չպետք է թույլ տան այնպիսի շահերի գոյություն, որը նրանց վրա կարող է ազդել հաճախորդների համար գործարքներ կատարելիս:


3.4.1. Ցանկացած անձնական շահագրգռվածություն, որը նրանք կամ նրանց ընտանիքի անդամները կարող են ունենալ: Անկախ սույն քաղաքականության դրույթներից, անհրաժեշտության դեպքում հաճախորդին անհրաժեշտ է տեղյակ պահել այդպիսի շահերի գոյության մասին,

3.4.2. Ցանկացած գոյություն ունեցող, առաջարկվող կամ հնարավոր գործարարական կապ DAM-ի և ցանկացած երրորդ անձի միջև, և

3.4.3. Ցանկացած համաձայնություն կամ գործարք, որը կարող է կնքվել DAM հետ:

Վերը շարադրված օրինակները սպառիչ չեն և DAM աշխատողները ամեն դեպքում պարտավոր են գերծ մնալ ցանկացած շահերի բախումից:

4. **Բացահայտում.** DAM կձեռնարկի բոլոր ողջամիտ քայլերը՝ շահերի բախումների հետ կապված ռիսկերը կառավարելու համար, սակայն եթե այդպիսի ջանքերը բավարար չլինեն երաշխավորելու, որ հաճախորդի շահերին սպառնացող վնասը հնարավոր է արդյունավետորեն


	<p align="center">Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ</p>	<p align="center">ՎՀ 11-17 Հ1</p>
---	---	-----------------------------------

կանխարգելել, DAM պետք է մինչև հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելը անհրաժեշտության դեպքում նրան գրավոր տեղյակ պահի այդպիսի վնասի բնույթի և աղբյուրի մասին:

Հաճախորդին շահերի բախման ռիսկի մասին տեղյակ պահելու հարցը քննարկելիս DAM հաշվի կառնի կոնկրետ հաճախորդի կարգավիճակը և այն, թե արդյոք DAM հետ գործարար հարաբերություն հաստատելու դեպքում նա ի վիճակի է հասկանալ ռիսկը: Ցանկացած ծանուցում կպարունակի բավարար տեղեկատվություն՝ գիտակցված որոշում կայացնելու համար:

DAM իր ստանդարտ համաձայնագրի միջոցով պարտավոր է մինչև հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելը ընդհանուր առմամբ կամ կոնկրետ գործարքի հետ կապված հաճախորդին տեղյակ պահել շահերի բախման բոլոր էական հանգամանքների մասին: Այդ ծանուցումն իրականացվում է նույնիսկ այն դեպքերում, երբ DAM աշխատակիցը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ շահերի բախումների ռիսկը նվազեցնելու համար: Շահերի բախումների կանխարգելման քաղաքականությունը մեր համաձայնագրի մաս չի կազմում, պայմանագրային պարտադիր ուժ չունի և դրանով մենք չենք ստանձնում պարտավորություններ, որոնք այլ կերպ մեզ վրա դրված են ՀՀ օրենսդրությամբ կամ ՀՀ ԿԲ որոշումներով:

5. Մերժում. Այն դեպքում, երբ DAM բացահայտում է, որ ի վիճակի չէ սույն քաղաքականությամբ նկարագրված եղանակներով կառավարել շահերի բախումների հետ կապված ռիսկերը, DAM կարող է մերժել հաճախորդի համար ծառայությունների մատուցումը:

	<p align="center">Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ</p>	<p align="center">ՎՀ 11-17 Հ1</p>
---	---	-----------------------------------

Հավելված 2


ՌԻՍԿԻ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Ստորև շարադրվածի միջոցով մենք ցանկանում ենք Ձեզ տեղեկացնել և Ձեզ համար բացահայտել որոշակի ներդրումների տեսակների և առևտրային ռազմավարությունների բնույթն ու դրանց հետ կապված ռիսկերը: Սույնով ցանկանում ենք նաև Ձեզ տեղեկացնել, որ ֆինանսական շուկաներում գործարքները կարող են հանգեցնել Ձեր ներդրումները կորցնելուն:

Սույն ծանուցումը չի կարող բացահայտել ոչ Ֆորեքսի, ֆյուչերսների, օպցիոնների, ոսկու կամ գնային տարբերության պայմանագրերի (այսուհետ՝ CFD), ինչպես նաև այլ ներդրումների տիպերին բնորոշ բոլոր ռիսկերը կամ այլ էական ասպեկտները, ոչ էլ տարբեր առևտրային ռազմավարություններին բնորոշ բոլոր ռիսկերը և այլ էական ասպեկտները: Մինչ ցանկացած գործարք նախաձեռնելը դուք պետք է ծանոթանաք այն գործիքին, որով դուք նպատակ ունեք գործարք կատարել, ինչպես նաև հասկանաք, թե ինչպես է աշխատում շուկան: Խնդրում ենք կարդալ մեզ հետ ձեռնարկվելիք գործարքին առնչվող ողջ տեղեկատվությունը, որը տեղադրված է մեր կայքէջում: Մենք խորհուրդ չենք տալիս գործարքներ կնքել այդ գործիքներով, եթե դուք չեք հասկանում դրանց բնույթը և չեք պատկերացնում Ձեր կողմից ստանձնած ռիսկի աստիճանը: Դուք նաև պետք է համոզվեք, որ առաջարկվող ֆինանսական գործիքները պիտանի են Ձեզ համար՝ հաշվի առնելով Ձեր հանգամանքները և ֆինանսական դրությունը: Որոշ ռազմավարություններ, ինչպիսիք են սփրեդ դիրքը կամ սթրադդլը կարող են նույնքան ռիսկային լինել, ինչպիսիք են, օրինակ, սովորական կարճ կամ երկար դիրքը:

Չնայած ածանցյալ գործիքները կարող են օգտագործվել ներդրումային ռիսկի կառավարման համար, այդ պրոդուկտներից որոշները անհրաժեշտ չեն շատ ներդրողների համար: Տարբեր գործիքներ ունեն ռիսկի տարբեր աստիճաններ և այդ գործիքներով գործարքներ կնքելու որոշում կայացնելիս դուք պետք է տեղյակ լինեք հետևյալի մասին.

1. Ներդրումներ Ֆորեքսում կամ արտարժույթային օպցիոններում:


	<p align="center">Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ</p>	<p align="center">ՎՀ 11-17 Հ1</p>
---	---	-----------------------------------

Այս ներդրումն ունի այն նույն ռիսկը, ինչ ֆյուչերսներում ներդրում կատարելիս և դուք պետք է ծանոթ լինեք ֆյուչերսներին բնորոշ ռիսկերին: Ֆորեքսում կամ արտարժույթի օպցիոններում գործարքները կարող են նաև հանգեցնել նրան, որ որոշ հանգամանքներ վրա հասնելու դեպքում դուք պարտավոր կլինեք կրել որոշակի վճարման պարտավորություններ (այսուհետ՝ պայմանական պարտավորություններ), և դուք պետք է տեղյակ լինեք այդպիսի հնարավորությունների մասին, ինչպես որ շարադրված է ստորև: Դուք նաև պետք է տեղյակ լինեք, որ արտարժույթի մարզինացված գործարքները ֆինանսական շուկայում գոյություն ունեցող գործարքներից ամենառիսկայիններից են և դրանք հարմար են միայն բանիմաց և հմուտ անհատների կամ կազմակերպությունների համար: Հաշվի առնելով ողջ ներդրումները կորցնելու հնարավորությունները, արտարժույթի շուկայում սպեկուլիացիաները պետք է կատարվեն բացառապես Ձեր միջոցների այն բաժնով, որոնք կորցնելու դեպքում Ձեր անձնական կամ ֆինանսական բարեկեցությունը չի տուժի (այսուհետ՝ ռիսկային կապիտալ):

Եթե դուք անցյալում կատարել եք միայն կոնսերվատիվ ներդրումներ, դուք միգուցե ցանկություն ունենաք սովորել արտարժույթի առուվաճառքի նրբությունները՝ մինչև այդ բնույթի ներդրումներ կատարելը: Դուք պետք է նաև գիտակցեք, որ գնման օպցիոնների սահմանափակ ռիսկը նշանակում է, որ դուք կարող եք կորցնել ամբողջ ներդրումը, եթե օպցիոնը կատարման պահին արժեք չունենա: Եթե դուք ցանկություն ունեք շարունակել ներդրումներ կատարելը, դուք պետք է գիտակցեք և ընդունեք, որ Ձեր կողմից ներդրված միջոցները բացառապես ռիսկային կապիտալ են և Ձեր միջոցները կորցնելը չի վնասի Ձեր ապրելակերպը և ոչ էլ կվնասի Ձեր ապագա ծրագրերը: Ի լրումն նշվածի, դուք լիովին հասկանում եք արտարժույթային ներդրումների ռիսկը, և ուրիշների հանդեպ Ձեր պարտավորությունները չեն տուժի, եթե դուք կրեք ներդրումների կորուստներ:

2. Ֆյուչերսներ

Ֆյուչերսներով գործարքները ներառում են պայմանագրի հիմքում դրված ակտիվը ապագայում պատրաստելու, գնելու կամ առաքելու, կամ որոշ դեպքերում կանխիկով դիրքը լուծելու պարտավորությունը: Ֆյուչերսները պարունակում են ռիսկի բարձր աստիճան: Լեվերեջը (բրոքերի կողմից տրամադրվող լրացուցիչ գումարը), որը հաճախ հասանելի է

	<p align="center">Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ</p>	<p align="center">ՎՀ 11-17 Հ1</p>
---	---	-----------------------------------

Ֆյուչերսներով գործարքներում, նշանակում է, որ փոքր դեպոզիտն անգամ կարող է տալ ինչպես նաև օգուտներ, այնպես էլ հանգեցնել խոշոր վնասների: Սա նշանակում է նաև, որ գնային փոքր շարժն անգամ կարող է հանգեցնել համեմատաբար խոշոր շարժի Ձեր ներդրումների արժեքում, և այդ շարժը կարող է աշխատել ինչպես Ձեր օգտին, այնպես էլ ի վնաս Ձեզ: Ֆյուչերսային գործարքներն առաջացնում են պայմանական պարտավորություններ, և դուք պետք է տեղյակ լինեք դրանց հետևանքների մասին, մասնավորապես մարզինացման պահանջներին, որոնք ներկայացվում են ստորև:

3. Օպցիոններ


Գոյություն ունեն օպցիոնների տարբեր տեսակներ, որոնք բնութագրվում են հետևյալ կերպ.

Գնման օպցիոններ

Գնման օպցիոնները պարունակում են առավել նվազ ռիսկ, քան վաճառքի օպցիոնները, քանի որ եթե հիմքում դրված ակտիվի գինը շարժվի Ձեր դեմ, դուք ուղղակի կարող եք չգնել այդ ակտիվը: Առավելագույն կորուստը կլինի պրեմիումը (օպցիոնի համար վճարված գումարը), գումարած ցանկացած այլ միջնորդավճար և գործառնական ծախսեր: Չնայած նշվածին, այնուամենայնիվ եթե դուք գնում եք ֆյուչերսային գործարքի քոլ օպցիոն և հետագայում իրականացնում եք Ձեր օպցիոնը, դուք ձեռք եք բերում ֆյուչերսը: Սա Ձեզ ենթակա է դարձնում «ֆյուչերսների» և «ներդրումային գործարքների պայմանական պարտավորություններով» բաժիններում նկարագրված վնասների ռիսկերին:

Օպցիոնների ստանձնում

Օպցիոն ստանձնելու ժամանակ ռիսկն ավելի մեծ է, քան օպցիոններ գնելու ժամանակ: Ձեր դիրքերը պահպանելու համար կարող է պահանջվել չնվազող մնացորդ, մինչդեռ Ձեր կրած վնասը կարող է ավելին լինել, քան ստացված պրեմիումը: Օպցիոն ստանձնելով դուք իրավական պարտավորություն եք ստանձնում վաճառել կամ գնել գործարքի հիմքում ընկած ակտիվը, եթե օպցիոն ձեռք բերողը դա պահանջի, անկախ նրանից, թե գինը որքան է հեռացել իրականացման գնից: Եթե դուք արդեն ունեք գործարքի հիմքում դրված ակտիվը

	<p align="center">Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ</p>	<p align="center">ՎՀ 11-17 Հ1</p>
---	---	-----------------------------------

(ապահովված քոլ օպցիոն), որը դուք պարտավորվել եք վաճառել, ռիսկը նվազում է: Եթե դուք չունեք հիմքում դրված ակտիվը (չապահովված քոլ օպցիոն), ռիսկի չափը կարող է անսահմանափակ լինել: Չապահովված քոլ օպցիոն պետք է ձեռք բերեն բացառապես փորձառու մարդիկ, և այն էլ միայն հնարավոր ռիսկերը հաշվի առնելուց հետո:

Ավանդական օպցիոններ


Լոնդոնի բորսայի անդամ որոշակի ընկերություններ որոշակի բորսայական կանոնների համաձայն ստանձնում են օպցիոնների հատուկ տեսակներ, որոնք կոչվում են ավանդական օպցիոններ: Սրանք կարող են պարունակել ավելի մեծ ռիսկ, քան այլ օպցիոնները:

Երկու ուղղությունների գները որպես կանոն չեն նշվում և գոյություն չունի բորսա, որտեղ կարելի է փակել բաց դիրքը կամ որևէ գործողություն կատարել հավասար կամ հակառակ գործարքի վրա՝ բաց դիրքը շրջելու համար: Կարող է դժվար լինել գնահատել դրա արժեքը կամ, վաճառողի համար, կառավարել իր ռիսկը:

Որոշակի օպցիոնների շուկաներ գործում են մարգինացման (չնվազող մնացորդի) հիմքի վրա, որոնց շրջանակներում գնորդները չեն վճարում լրիվ պրեմիումը օպցիոնը ձեռք բերելու պահին: Այդ դեպքերում Ձեզանից հետագայում կարող են պահանջել վճարել չնվազող մնացորդ՝ մինչև Ձեր պրեմիումի արժեքի չափով: Եթե դուք չկատարեք դա, Ձեր դիրքը կարող է լուծվել կամ փակվել նույն եղանակով, ինչ ֆյուչերսների դեպքում:

CFD

Ֆյուչերսները և օպցիոնները կարող են նաև դիտարկվել որպես CFD-ներ: Սրանք կարող են լինել FTSE 100 ինդեքսի կամ ցանկացած այլ ինդեքսի ֆյուչերսներ կամ օպցիոններ, կամ արտարժույթի կամ տոկոսադրույքի սվոպներ: Սակայն ի տարբերություն այլ ֆյուչերսների և օպցիոնների, այդ կոնտրակտները կարող են կատարվել միայն կանխիկով: CFD-ներում ներդրումները պարունակում են նույն ռիսկերը, ինչ և ֆյուչերսներում կամ օպցիոններում ներդրումները, և դուք պետք է տեղյակ լինեք ֆյուչերսների և օպցիոնների ռիսկերից: CFD-ներում ներդրումները կարող են նաև հանգեցնել պայմանական պարտավորություններով

	<p align="center">Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ</p>	<p align="center">ՎՀ 11-17 Հ1</p>
---	---	-----------------------------------

վնասների և դուք պետք է տեղյակ լինեք դրանց հետևանքներից, ինչպես որ ներկայացված է սույն հավելվածում:

Արտաբրոսայական CFD պայմանագրեր


Այս գործարքները չեն իրականացվում ճանաչված կամ կարգավորվող բորսայում և սա նշանակում է, որ ներդրողը ստանձնում է ռիսկի առավել բարձր աստիճան: Սա, օրինակ, նշանակում է, որ եթե դուք ցանկանում եք փակել CFD ժամանակից շուտ, դուք այն պետք է փակեք մեր նշած գնով, որը կարող է ներառել CFD գործարքի հիմքում դրված շուկայի պրեմիումը կամ զեղջը: Երբ գործարքի հիմքում դրված շուկան փակ է, մեր գնանշման վրա կարող է ազդել այլ հաճախորդների կողմից գնման կամ վաճառքի ծավալները: Մեր հետ կնքված պայմանագրերը կարող են փակվել միայն մեզ հետ:

6. Արտասահմանյան շուկաներ

Արտասահմանյան շուկաները կարող են պարունակել տարբեր ռիսկեր: Որոշ դեպքերում ռիսկն ավելի մեծ է: Ըստ պահանջի, մենք պետք է տրամադրենք համապատասխան ռիսկի կամ դրանից պաշտպանության միջոցների մասին պարզաբանումներ, ներառյալ տեղեկատվություն այն մասին, թե որ չափով մենք պատրաստ կլինենք կրել պատասխանատվություն մեր հետ աշխատող օտարերկրյա ընկերության դեֆոլտի դեպքում: Օտարերկրյա շուկաներում գործարքների վնասի կամ օգուտի վրա կազդեն նաև արտարժույթի տատանումները:

7. Պայմանական պարտավորությամբ ներդրումային գործարքներ

Չնվազող մնացորդ ունեցող պայմանական պարտավորության ներդրումային գործարքներով դուք պարտավոր եք գնման ողջ գինը անմիջապես վճարելու փոխարեն կատարել գնման գնի սահմաններում մի շարք վճարումներ: Եթե դուք գործարքներ եք կնքում ֆյուչերսներով, CFD-ներով կամ վաճառքի օպցիոններով, դուք կարող եք ամբողջությամբ կորցնել դիրքը բացելու կամ պահպանելու համար Ձեր ներդրված սահմանաչափը: Եթե շուկայական գները շարժվում են ի վնաս Ձեզ, Ձեզանից կարող են պահանջել անհապաղ

	<p align="center">Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ</p>	<p align="center">ՎՀ 11-17 Հ1</p>
---	---	-----------------------------------

վճարել լրացուցիչ սահմանաչափ՝ դիրքը պահպանելու համար: Եթե դուք պահանջվող ժամանակում չեք կատարում պահանջը, Ձեր դիրքերը կարող են փակվել վնասով և դուք պարտավոր կլինեք փոխհատուցել վնասը:

Նույնիսկ եթե գործարքը չունի չնվազող մնացորդի պահանջ, դրանով նույնպես կարող է պարտավորություն ծագել որոշակի հանգամանքներում որոշակի վճարումներ կատարելու առումով՝ ի լրումն այն գումարի, որը դուք վճարել եք գործարք կնքելիս:


8. Գրավ, ներառյալ չնվազող մնացորդը:

Եթե դուք ներդնում եք գրավ՝ որպես ապահովություն, այդպիսի գրավի առնչությամբ մեր վերաբերմունքը տարբեր դեպքերում կարող է տարբեր լինել՝ կախված նրանից, թե դուք որտեղ եք գործարքներ կնքում և ինչ գործարքներ եք կնքում: Մասնավորապես, վերաբերմունքը կարող է էականորեն տարբերվել կախված նրանից, թե դուք գործարքները կնքում եք ճանաչված բորսաներում, այդ բորսայական կանոններով (ներառյալ քլիրինգային պալատների կանոններով) սահմանված կարգով կամ գործարքային արտաբորսայական եղանակով: Ձեր անունից գործարքներ կնքելու դեպքում ներդրված գրավը կխառնվի այլ ակտիվների հետ: Նույնիսկ եթե Ձեր գործարքները ի վերջո համարվեն շահութաբեր, դուք կարող է չստանաք նույն ակտիվները, որոնք դուք ավանդադրել եք, դուք կարող է ստիպված լինեք ընդունել կանխիկով վճարումը: Դուք պետք է հստակեցնեք մեզ հետ, թե մենք ինչպես պետք է վարվենք Ձեր գրավի հետ:


9. Անվճարունակություն

Մեր կամ Ձեր հետ գործարքում ներգրավված ցանկացած բրոքերի անվճարունակությունը կամ դեֆոլտը կարող է հանգեցնել առանց Ձեր համաձայնության Ձեր դիրքերը փակելուն կամ լիկվիդացնելուն: Որոշ հանգամանքներում, դուք կարող է հետ չստանաք որպես գրավ դրված ակտիվները և դուք ստիպված կլինեք ընդունել հասանելի ցանկացած վճարումը կանխիկով:

10. Անցյալ ցուցանիշներ

	Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ	ՎՀ 11-17 Հ1
---	---	--------------------

Դուք պետք է տեղյակ լինեք, որ Ձեր գործարքների առարկա ցանկացած ֆինանսական գործիքի գինը կախված է ֆինանսական շուկաների տատանումներից, որոնք մեր հսկողությունից դուրս են և որ տվյալ ֆինանսական գործիքի անցյալ ցուցանիշները որևէ կերպ չեն կարող հանդիսանալ ապագա կատարողականի ցուցանիշ:

	<p align="center">Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ</p>	<p align="center">ՎՀ 11-17 Հ1</p>
---	---	-----------------------------------

Հավելված 3

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ք. Երևան « » _____ 201--թ.

Ես՝ _____ ս


(անձնագիր՝ _____, տրված _____ կողմից « » _____ 20__թ.), սույն հայտարարությամբ հավաստում եմ «Դիվիսա Էյ Էմ» ՓԲԸ-ը, որ.

1. Բավարարում եմ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 23-րդ մասի պահանջներին,
2. Համաձայն եմ որակվել որպես պրոֆեսիոնալ հաճախորդ,
2. Տեղյակ եմ, որ որպես պրոֆեսիոնալ հաճախորդ որակվելու դեպքում հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ չեն գործելու իմ նկատմամբ և այդ պատճառով ես կորցնում եմ որոշակի պաշտպանվածություն:

_____ ,

_____ (անուն, ազգանուն, հայրանուն)

(ստորագրություն)

	<p align="center">Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ</p>	<p align="center">ՎՀ 11-17 Հ1</p>
---	---	-----------------------------------

Հավելված 4


ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բրոքերը հաճախորդներից ընդունում է արտարժույթով գործարքների կատարման հանձնարարականները և հաղորդում է դրանք կատարման համար կամ կատարում է պատվերները հաճախորդի անունից և բացառապես Բրոքերի կողմից առաջարկվող հարթակների միջոցով:

